ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի,

Մասնակցությամբ՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 05.03.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 05.03.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2641-19 գրությամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 15.02.2019թ. թիվ 08/15.3/1818-19 գրության հիման վրա, 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2641-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրություններով հայտնել է հետևյալ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը իր կարիքների համար՝ նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2019թ. փետրվարի 7-ին մասնակցության հայտ է ստորագրել և ներկայացրել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) աշխատակից Գևորգ Մարտիրոսյանը՝ ընդ որում, առանց համապատասխան լիազորագիր ունենալու և Ընկերության տնօրենի համաձայնության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2019թ. ժամը 11:00 կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 1/ա ենթակետի համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը ստորագրված չէ տնօրենի կողմից, ինչպես նաև հայտով ներկայացված լիցենզիան չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետով պահանջվող քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաներին, իսկ «ԱՐՄԱՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները:

Նույն արձանագրության 2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2019թ. ժամը 12:00 կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ արձանագրվել է, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը (որևէ փաստաթուղթ չի ներկայացրել):

Նույն արձանագրության 2 կետի 1 ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.10 կետը, մերժեց «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ ՓԲԸ-ի գործադիր մարմինը կարող է լինել կոլեգիալ (վարչություն, տնօրինություն) և (կամ) միանձնյա (տնօրեն, գլխավոր տնօրեն): Գործադիր մարմինը ղեկավարում է ընկերության ընթացիկ գործունեությունը և հաշվետու է տնօրենների խորհրդին (դիտորդ խորհրդին) ու բաժնետերերի ընդհանուր ժողովին: Բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների իրավասությունը, ինչպես նաև նրանց որոշումների ընդունման և ընկերության անունից հանդես գալու կարգը սահմանվում է սույն օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և ընկերության կանոնադրությանը համապատասխան:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՓԲԸ-ի տնօրենը (գլխավոր տնօրենը)՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ)ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր...:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի անունից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում ներկայացված մասնակցության հայտը ստորագրվել է Ընկերության աշխատակցի կողմից, ով իրեն իրավունք է վերապահել առանց Ընկերության տնօրենի համաձայնության և առանց համապատասխան լիազորագիր ստանալու՝ որոշելու տվյալ Ընթացակարգին Ընկերության մասնակցության հարցը և իր անունից էլեկտրոնային եղանակով ստորագրելու նշված Ընթացակարգի մասնակցության հայտը: Մինչդեռ, ինչպես նշվել է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ ՓԲԸ-ի ընթացիկ ղեկավարումը, այդ թվում նաև գնման ընթացակարգերին մասնակցելու որոշումը կայացվում է ընկերության ղեկավարի (տվյալ դեպքում տնօրենի) կողմից, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Իրականում Ընկերության տնօրենը այդ օրերին բացակայել է Երևան քաղաքից (իր աշխատակիցների հետ եղել է գործուղման մեջ, համապատասխան ապացույցը կցվում է) և տեղյակ չի եղել Ընկերության աշխատակցի կողմից կազմված հայտի և այն ներկայացնելու մասին: Ավելին, նշվածի արդյունքում «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից համապատասխան հրամանի համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի համապատասխան աշխատակցին տրվել է նկատողություն /կցվում է/:

Հենց այդ իսկ պատճառով «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի տնօրենը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը չի ներկայացրել փաստաթղթերը ստորագրելու մասին տրված լիազորագիրը՝ նման լիազորությունը վերջինիս ընդհանրապես վերապահված չլինելու պատճառով:

Տվյալ իրավիճակում գործ ունենք ոչ թե «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի, այլ քաղաքացի կողմից լրացված և ներկայացված թղթերի հետ, որոնք չեն կարող համարվել Ընկերության կողմից ներկայացված հայտ, և առավել ևս նման պայմաններում «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն չէր կրում պարտավություն շտկելու ներկայացված փաստաթղթերը՝ նման փաստաթղթեր (հայտ) պաշտոնապես չներկայացնելու պատճառով:

Ուսումնասիրելով վերոնշված փաստերը Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ի սկզբանե պետք է մերժվեր «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ փաստաթղթերը տնօրենի կողմից չստորագրված լինելու փաստով /լիազորագրի բացակայության պայմաններում/ և այս պարագայում, երբ գնահատող հանձնաժողովը չի մերժել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ստացվում է մի իրավիճակ, որ յուրաքանչյուր քաղաքացի կարող է կամայականորեն լրացնել իր նախընտրած Ընկերության տվյալներով հայտ, ստորագրել այն և մասնակցել Ընթացակարգերի, արդյունքում Ընկերությանը կանգնեցնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ.Անանյանի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 19.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50 որոշմամբ արձանագրվել է, որ հայտը ստորագրելու և ներկայացնելու իրավունք վերապահող ոչ պատշաճ լիազորագիրը հիմք է հայտը մերժելու համար՝ արձանագրելով, որ բողոքարկվող ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները: Ավելին, նույն փաստական հանգամանքներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.08.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/110 մեկ այլ որոշմամբ արձանագրվել է, որ հայտով ներկայացվող փաստաթղթերն են՝ հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, ոչ գնային առաջարկը /տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր/ եթե հրավերով նախատեսված է և հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր /տեղեկություններ/:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ լիազորագիրը հայտով ներկայացվող փաստաթուղթ չէ և ենթակա չէ շտկման:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ գնահատող հանձնաժողովը «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժեր, այլ ոչ թե առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ավելին, նույն փաստական հանգամանքներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ՍՑ-ԷՍ-2018/110 որոշմամբ գտել է, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում:

Ելնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի որոշումների տրամաբանությունից՝ ստացվում է, որ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը պետք է, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ եթանկետի պահանջներով, մերժեր ներկայացված հայտը, այլ ոչ թե Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և պահանջել, որպեսզի Ընկերությունը ներկայացներ թե լիազորագիրը և թե լիցենզիան: Իսկ նման պայմաններում ընդհանրապես չէր առաջանա «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակիցն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վտանգ՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նշված փաստերը և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ի լրումն 06.03.2019թ. դիրքորոշման՝ Ընկերությունը հայտնել է նաև, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի անունից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը իր կարիքների համար՝ հայտարարված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցմանը ոչ միայն հայտ է ներկայացրել

Ընկերության աշխատակիցը՝ համապատասխան լիազորագրի բացակայությամբ և առանց Ընկերության տնօրենի թույլտվության, այլ նաև ամբողջ հայտի հավելվածներում նշել է «Տրանսնախագիծ» ՓԲԸ, սակայն այդպիսի անվանումով ՓԲԸ գրանցված չէ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, այսինքն նման անվանումով տնտեսվարող սուբյեկտ իրավաբանորեն գոյություն չունի:

Եվ այսպես՝ «Տրանսպորտային շինարարության նախագծահետազոտական ինստիտուտ «Տրանսնախագիծ» ՓԲԸ»-ն իր թղթաշրջանառությունը /գրություններ, թերթիկներ, նամակներ և այլն/ իրականացնում է կարճ հապավումով, այն է «Տրանսնախագիծ» ՓԲԸ անվանմամբ:

«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հավելված 1-ում «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի անվան դիմաց նշված է ՀՎՀՀ 00802905, սակայն Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Տրանսնախագիծ» ՓԲԸ անվանմամբ ընկերություն գոյություն չունի, իսկ 00802905 ՀՎՀՀ-ով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է «Տրանսպորտային շինարարության նախագծահետազոտական ինստիտուտ «Տրանսնախագիծ» ՓԲԸ»-ն /համապատասխան ապացույցը կցվում է/:

Այսինքն նույնիսկ այս պարագայում՝ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ոչ միայն Ընկերության անունից չլիազորված աշխատակիցն է ստորագրել փաստաթղթերը /տնօրենի գործուղման պայմաններում/, այլ նաև ամբողջ հայտը, այդ թվում նաև գնային առաջարկը, ներկայացված է ՀՀ-ում ընդհանրապես գոյություն չունեցող «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի անունից:

ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրի պաշտոնական կայքէջում կատարված որոնման արդյունքում նույնիսկ ակնհայտ է, որ առկա է «Տրանսպորտային շինարարության նախագծահետազոտական ինստիտուտ «Տրանսնախագիծ» ՓԲԸ» անվանումով իրավաբանական անձ, սակայն «Տրանսնախագիծ» ՓԲԸ անվանումով իրավաբանական անձ գոյություն չունի և այս պարագայում գնահատող հանձնաժողովի կողմից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի հայտը նույնպես ենթակա էր մերժման:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույն կարծիքն ունի նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, որը իր 21.01.2019թ. կայացրած ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 բողոքի քննության վերաբերյալ կայացրած որոշմամբ, երբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանը իր կողմից ներկայացված տեխնիկական-բնութագրում «արտադրողի անվանում» նշել էր «Aqua arma water company» ՍՊԸ, այնինչ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրի պաշտոնական կայքէջում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմի իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Aqua arma water company» ՍՊԸ իրավաբանական անձ գոյություն չունի, իսկ «Աքվա արմա ուոթեր քամփնի» ՍՊԸ գոյություն ունի: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հաշվի առնելով վերոգրյալը, գտել էր, որ գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ...:

«Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/44 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:20-ին և 14.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 14.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.02.2019թ. թիվ 08/15.3/1818-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ մասնակիցները պետք է ներկայացնեն «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» լիցենզիա՝ Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ և Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային օբյեկտների արհեստական կառույցներ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը հայտով ներկայացրել է 2014թ. հունիսի 14-ին տրված թիվ 8536 լիցենզիան, որին կից ներկայացրել է թիվ 8536 տրանսպորտային լիցենզիայի 02 ներդիրը: Սակայն 2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-236-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» գործունեության տեսակի լիցենզիաների գործողությունը դադարել է «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան (2018 թվականի մայիսի 16) հաջորդող վեցերորդ ամիսը լրանալուն պես (2018 թվականի նոյեմբերի 16), իսկ նոր՝ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեությունների լիցենզավորման գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1533-Ն որոշման համաձայն:

Բացի այդ ընկերության կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը՝ այդ թվում նաև գնային առաջարկը ստորագրված չեն եղել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.02.2019թ. ծանուցում է ուղարկվել ընկերությանը և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա

ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև ներկայացնել պահանջվող լիցենզիաները:

Սակայն մասնակցի կողմից մինչև նախատեսված ժամկետի ավարտը որևէ ծանուցում չի ուղարկվել՝ անհամապատասխանությունները չեն շտկվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/44 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:20-ին և 14.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2019/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2019/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը ստորագրված չեն տնօրենի կողմից, ինչպես նաև հայտով ներկայացված լիցենզիան չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաներին:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և Ընկերությանը ծանուցել անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը (որևէ փաստաթուղթ չի ներկայացրել), ուստի Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2641-19 գրությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 15.02.2019թ. թիվ 08/15.3/1818-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 06.12.2017թ. ՀՕ-236-Ն օրենքի համաձայն՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, ընդ որում նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանվել է, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները շարունակում են մնալ ուժի մեջ մինչև «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան հաջորդող վեցերորդ ամիսը լրանալը:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կազմակերպվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Հրավերով սահմանվել է, որ հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները. «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» լիցենզիա՝ ըստ հետևյալ ոլորտի.

ա) Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ:

բ) Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային օբյեկտների արհեստական կառույցներ:

«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը հայտով ներկայացրել է քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) 14.06.2004թ. տրված թիվ 8536 լիցենզիան և 8536 տրանսպորտային լիցենզիայի 02 ներդիրը:

Ընկերության հայտը էլեկտրոնային եղանակով ստորագրվել է Ընկերության տնօրենը չհանդիսացող Գևորգ Մարտիրոսյանի կողմից, միևնույն ժամանակ հայտով չի ներկայացվել վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը ստորագրված չեն տնօրենի կողմից, ինչպես նաև հայտով ներկայացված լիցենզիան չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաներին:

Նույն արձանագրությամբ համաձայն՝ որոշվել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և Ընկերությանը ծանուցել անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը (որևէ փաստաթուղթ չի ներկայացրել), ուստի Ընկերության հայտը մերժվել է:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի II Մասի 3-րդ կետի 3.3-րդ ենթակետով սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ ***վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:***

Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են հետևյալ լիցենզիաները. «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» լիցենզիա՝ ըստ հետևյալ ոլորտի.

ա) Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ:

բ) Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային օբյեկտների արհեստական կառույցներ:

Հրավերի Մաս I-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 5-րդ պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը ***հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:***

Այսպիսով՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ստորագրվել է Ընկերության տնօրենը չհանդիսացող անձի կողմից, սակայն միևնույն ժամանակ հայտով չի ներկայացվել հրավերի Մասի II-ի 3-րդ կետի 3.3-րդ ենթակետով նախատեսված վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Դրա հետ մեկտեղ Ընկերության կողմից ներկայացվել է լիցենզիա, որը սակայն չի համապատասխանել հրավերով սահմանված լիցենզիաներին:

Ընկերության կողմից, Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով ծանուցվելուց հետո, նույնպես չեն ներկայացվել հրավերով նախատեսված հայտով ներկայացվող վերոհիշյալ փաստաթղթերը:

Այսպես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2641-19 գրությամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**